

Լ Ե Մ Ա Ն Յ Ա Ո Ւ Պ Տ

Յուլիս 24-ին (1938 թ.) Ինսպրուկ քաղաքում (Աւստրիական Տիրու) իր մահկանացուն է կնքել հռչակաւոր արեւելադէտ եւ հնադէտ - պատմարան Կարլ Լեման - Հառուպտ, խոր ծերութեան մէջ: Հայաստանի հնազոյն պատմութեանն եւս նւիրած ունի նա խիստ արժէքաւոր աշխատութիւններ, որոնց թւում մասնաւոր յիշատակութեան արժանի է իր «Հայաստան երբեմն եւ այժմ» եռահատոր փորձը:

Կարլ Ֆրիդրիխ Լեման - Հառուպտ ծնած է 1861 թւականի Մարտ 11-ին, Համբուրգ քաղաքում: Միջնակարգ վարժարանն աւարտելուց յետոյ, նա յաճախել է Հայտելբերգի, Լայպցիգի, Գէոթինգէնի եւ Բերլինի համալսարանները՝ հետեւելով իրաւագիտական եւ արեւելադիտական ճիւղերին: 1883-ին Գէոթինգէնի համալսարանում ձեռք է բերել իրաւագիտութեան դոքտորի, իսկ 1886-ին Բերլինի համալսարանում՝ փիլիսոփայութեան դոքտորի գիտական աստիճաններ:

Համալսարանական ուսումն աւարտելուց յետոյ, Լեման Հառուպտ սկիզբը պաշտօնավարել է Բերլինի արքայական Թանգարանում, իսկ 1893-ին սլրիւստ - դոցենտ է դարձել նոյն քաղաքի համալսարանում, որպէս հին ազգերի պատմութեան դասախօս: 1898 - 99-ին դիտական ուղեւորութիւն է կատարել դէպի Հայաստան, ի մասնաւորի Վանի շրջանը՝ յատուկ նպատակ ունենալով ուսումնասիրել ուրարտական կամ խալդական սեպագծեւ արձանադրութիւնները: 1901-ին ձեռք է բերել հին պատմութեան ուսուցչապետի ամբիոնը Բերլինի համալսարանում: 1911 - 1914 թ. դասախօսել է Լիվերպուլում, 1914 - 1915 թ. Գրայֆուլդում (Գերմանիա), 1915 - 1918 թ. Կ. Պոլիս: 1918-ից սկսած գործել է Ինսպրուկի համալսարանում, ուր եւ հանգստեան էր կոչւել 1932-ին:

1937-ի սկիզբը Լեման - Հառուպտ մի շարք դասախօսութիւններ կարդալու նպատակով Թիֆլիս ու Երեւան էր մեկնել, յատուկ հրաւերով: Իր վերջին հետազոտութիւններից մէկն էլ (Թերեւս՝ ամենաշերջինը), գրւած 1937 թ. Մարտ - Ապրիլ ամիսներին Թիֆլիսում եւ տպւած Վիէննայի Արեւելագիտական Հանդէսում, նւիրւած է Թիֆլիսի Թանգարանի մէջ պահուող խալդական արձանադրութիւններին ու

ուսումնասիրութեան, որոնց մի մասը պատերազմի տարիներին է աշգտեղ փախադուել Վանի շրջանից: Թիֆլիսում խոստացած են եղել նրան ուղարկել որոշ նիւթեր՝ նոյն աշգ արձանագրութիւնները շուրջը:

Եւ, սակայն, աւելացնում է՝ Լեման - Հաուպտ կանխատեսելով իր մահը, աշգ նիւթերը եթէ անգամ չհասնեն իրեն այլեւս, այնուամենայնիւ կունենան իրենց օգտակարութիւնը:

Բաղմաթիւ են Լեման - Հաուպտի արեւելագիտական դրամքները՝ տպւած առանձին հատորներով եւ, մանաւանդ, ցրած մասնագիտական հանդէսներում: Աշխատութիւնները մեծ մասով նւիրւած են Հին Արեւելքի եւ ի մասնաւորի Ասորա - Բաբելոնի ու մանաւանդ Նախահայաստանի կամ Ուրարտուի պատմութեան: Իր գլուխ դործոցն է Հայաստան երբեմն եւ այժմ (Armenien einst und jetzt) եւսահատոր կոթողային աշխատութիւնը:

Աշգ նշանաւոր դործը անմիջական արդիւնքն է հեղինակի կողմից 1898 - 1899-ին Հայաստան կատարած գիտական ուղեւորութեան: Առաջին գիրքը լոյս է տեսած 1910-ին, երկրորդը՝ 1926-ին, երրորդը՝ 1931-ին: Ինչպէս որ վերնագիրը եւ խորագիրը *) (Հայաստան երբեմն եւ այժմ. ուղեգրութիւններ եւ հետազոտութիւններ) ցոյց են տալիս արդէն, դործը չօղափում է մի կողմից Հայաստանի անցեալը, աւելի ճիշտը՝ նրա հնագոյն նախահայկական (ուրարտական) անցեալը, իսկ միւս կողմից էլ՝ Հայաստանի ներկան: Առաջինը՝ գիտական հետազոտութիւնների, իսկ երկրորդը՝ ուղեգրութեանց ձեւի տակ: Իւրաքանչիւր հատորը բաղկացած է 5 - 600 մեծագիր էջերից՝ օժտւած բաղմաթիւ նկարներով եւ մանր ու մեծ քարտէսներով:

«Հայաստան երբեմն եւ այժմ» աշխատութեան կարեւորագոյն եւ աւելի մնայուն մասը կազմում են, մեր կարծիքով, դուռ հետազոտական հատւածները՝ նւիրւած Հայաստանի ուրարտական շրջանին: Ուղեգրական մասերն եւս արժէքաւոր են: Վերջիններս վերաբերում են, բնականաբար, մեր երկրի վիճակին 1898 - 1899 թ., երբ Լեման - Հաուպտ, ուղեկցութեամբ եւ գործակցութեամբ Վալդեմար Բելքի, իր գիտական արշաւը կատարեց գէպի Հայաստան:

Լեման - Հաուպտի աշխատութեան երրորդ գիրքը եւ կամ երկրորդ հատորի երրորդ մասը, ունի հետեւեալ վերնագիրը՝ «Պալ-

*) Վերնագիրն եւ խորագիրը բառերի գործածութեան մէջ, կարծում ենք, դնել պէտք է որոշ տարբերութիւն՝ խորագիրը բառը առնելով ենթավերնագիր իմաստով:

դերի մշակոյթը, ծագումը եւ բեկորները» : Այս տողերի մէջ դժբախտաբար անկարող ենք հանգամանօրէն կանգ առնել դրա վրա : Այսչափն ասենք միայն, որ իր տեսակում լաւագոյն դործերից մէկն է՝ այն, թերեւս՝ լաւագոյնը : Դժւար է մատնանշել մի ուրիշ աշխատութիւն, ուր այնչափ հիմնաւոր ու բազմակողմանի կերպով հետազոտւած ու ներկայացւած լինէր Խալդեերի *) ծագումը եւ մշակոյթը, ինչպէս որ արւած է այդ «Հայաստան երբեմն եւ այժմ» հոյակապ աշխատութեան մէջ :

Լեւոն - Հաուպտ Եւրոպայի ամենանշանաւոր խաղաղէտների կամ ուրարտագէտների թւին է պատկանում : Իր հրատարակութեամբ է լոյս տեսած նաեւ Corpus Inscriptiorum Chaldi-Carum (Ժողովածոյ խալդերէն վիճական արձանագրութեանց) գործը, լոյս տեսած ցարդ երկու պրակով : Նպատակ ունի ներկայացնել խալդերէն բոլոր ծանօթ արձանագրութեանց բնագիրները : Որպէս խալդական պատմութեան բուն իսկ աղբիւր՝ եղակի է այդ հրատարակութեան արժէքը :

Լեւոն - Հաուպտի մի քանի ուրիշ աշխատութիւնների մէջ եւս հետազոտութեան առարկայ է դարձած Հայաստանի հնագոյն շրջանը : Յիշատակենք դրանց թւում երկուսը միայն. առաջին՝ «Նիւթեր Հայաստանի եւ Միջագետքի հին պատմութեան» (1906 թ.), երկրորդ՝ «Հին Արեւելքի պատմութիւն» (1925 թ.) գործերը : Այդ եւ ուրիշ ուսումնասիրութեանց եզրակացութիւնները, սակայն, շատ աւելի ընդարձակ շրջանի մէջ ներկայացւած են հեղինակի գլուխ - գործոցի՝ «Հայաստան երբեմն եւ այժմ» աշխատութեան մէջ :

Աւելցնենք, վերջապէս, որ Լեւոն - Հաուպտ հիմնադիրն էր եւ երկարամեայ ղեկավարը Klio անունով միջազգային գիտական հանդէսի, որին իրենց աշխատակցութիւնն են բերած ծանօթ գիտնականներ : Մեծ թիւ են կազմում եւ հանդուցեալի այն ընդարձակ ու համառօտ ուսումնասիրութիւնները, որ լոյս են տեսած պատմագիտական այդ հանդէսի էջերում :

Ա. Ա.

*) Մեր մատենագրութեան մէջ այդ անունը պահած է Խաղաղէտ Դեւոյ : Վերջին ժամանակներս Եւրոպական գիտութեան մէջ աւելի գործածական են դառնում Ուրարտու, ուրարտացի անունները :

